

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 2-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր Կիւրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ արդ. Կճոյնանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասաւ» (Հովհ. Ա 4—5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 7-ին, ուրբաթ.—Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի ատթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

* * *

Ապրիլի 9-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց (տես էջ 57):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 16-ին, կիրակի.—Կարմիր Կիւրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորարար Մայր Աթոռում գտնվող Տ. Ներսես քհն. Ներսեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց (տես էջ 60):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 23-ին, կիրակի.—Տօն երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին

Ս. Օծությունն Տ. Տ. Գարեգին Բ-ը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց (տես էջ 15):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 24-ին, երկուշաբթի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայաստան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստյան հանդիսավոր պատարագ մատուցեց Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից ու հուզիչ քարոզ խոսեց (տես էջ 22):

Հավարտ պատարագի Նահատակաց հուշարձանի մոտ կատարվեց հանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Գարեգին Բ Կաթողիկոսն իր շքախմբով:

* * *

Ապրիլի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Հովհ. Ժ 10) բնաբանով:

* * *

Մայիսի 4-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբդ. Չուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 7-ին, կիրակի.—Երկրորդ Յաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբդ. Կճոյանը:

Ս. պատարագի ընթացքում, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի շրջանավարտ ուսանողների սարկավագական ձեռնադրություն:

* * *

Մայիսի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մայիսի 14-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց» (շարական) բնաբանով:

* * *

Մայիսի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Մայիսի 21-ին, կիրակի.—Սկիզբն Յարութեան Կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան աբդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Մայիսի 28-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Անանիա եպս. Արաքաջյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պա-

տարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

* * *

Հունիսի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հունիսի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագի ընթացքում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի նախորդ տարիների հինգ շրջանավարտ սարկավագների քահանայական ձեռնադրությունը:

«Հայր մեր»-ից հետո «Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղեն կարծրացեալ սրտիս» (շարական) բնաբանով բովանդակալից քարոզ խոսեց պատարագիչ սրբազան հայրը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ վեղարի տվչության արարողությունը:

* * *

Հունիսի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ «Մաքուր եւ հարսն երկնից Մարիամ Տաճար եւ աթոռ Աստուծոյ բանի. Զքեզ երանեն ամենայն ազինք» (շարական) բնաբանով քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 25-ին, կիրակի.—Բարեկենդան Վարդավառի պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների արեմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և «Հայր մեր»-ից առաջ ընթերցեց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը (տես էջ 5):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետի: